

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀՈՒՆԱՀՈՄԵԱԿԱՆԵՎ ԱԶԱՏ ՈՃԻ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ, ՍԱՄԲՈՅԻ ԵՎ ՁՅՈՒԴՈՅԻ ՄԱՐԶԻՉՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՄԲ (ԿԱՄԱՎՈՐ) ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ԼՐԱՑՄԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացվում են մարզչի կամավոր ատեստավորման քննության թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը և պատասխանների՝ ձևաթղթում լրացման կարգի բացատրությունները, պատասխանի գնահատման չափանիշները, բողոքարկման ժամկետները և կարգը, գրականության ցանկը:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը պարունակում է 44 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 60 միավոր: Բովանդակային առումով թեստում ընդգրկված են հետևյալ բաժինները՝

1. Սպորտի ընդհանուր տեսություն
2. Ընտրած մարզաձևի տեսություն և պրակտիկա
3. Սպորտի մանկավարժություն
4. Սպորտի հոգեբանություն
5. Բժշկական սարանական հիմունքները սպորտում

Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն 2 հիմնական տեսակներ՝ ընտրովի պատասխանով և կարճ պատասխանով:

Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում տրվում են պատասխանի 4-ական տարբերակներ, որոնցից ճիշտ է մեկը: Ճիշտ պատասխանի դեպքում տրվում է 1 միավոր: Միայն պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Կարճ պատասխանով առաջադրանքների դեպքում տրվում է 7-9 տարբերակներ, որոնցից պահանջին համապատասխանում են որևէ 3-ը: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է 1-ական միավոր: Այսպիսով, տվյալ առաջադրանքներից հնարավոր է վաստակել 1 կամ 2 կամ 3 միավոր:

ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել x նշանը: Միևնույն առաջադրանքի համարի

տակ մեկից ավելի նշում կատարելու կամ չնշելու դեպքում տվյալ առաջադրանքը գնահատվում է 0:

Կարճ պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համարներին համապատասխանող վանդակներում հարկավոր է դնել **x** նշանները: Չի կարելի կատարել 3-ից ավել նշում: Տվյալ առաջադրանքի տողում ցանկացած 4 և ավել նշում ունենալու դեպքում առաջադրանքը գնահատվում է 0, եթե անգամ ճիշտ են որևէ 1 կամ 2 կամ 3 նշումները:

ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

Թեստ-գրքույկները չեն ստուգվում: Սքանավորվում, ճանաչվում և գնահատվում են միայն պատասխանների ձևաթղթերը:

Պատասխանների ձևաթղթերի կտրված մասերի վերծանումից հետո ստուգման տվյալները գրանցվում են որպես մարզչի ատեստավորման արդյունք:

Ատեստավորման արդյունքները հրապարակվում են ատեստավորման օրվանից հետո՝ հինգերորդ օրը Գնահատման և թեստավորման կենտրոնի (ԳԹԿ) կայքէջում:

ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

Ատեստավորման արդյունքի հետ անհամաձայնության դեպքում մարզիչն արդյունքների հրապարակմանը հաջորդող օրը՝ ժամը 9:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում, կարող է ատեստավորման արդյունքների բողոքարկման դիմումն էլեկտրոնային եղանակով ուղարկել ԳԹԿ համապատասխան էլեկտրոնային հասցեին:

Մարզչի գիտելիքի գրավոր ստուգման արդյունքի բողոքը քննելու նպատակով ատեստավորումը կազմակերպած կենտրոնի ղեկավարի հրամանով ստեղծվում է 5 անձից բաղկացած բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով): Հանձնաժողովի կազմում ընդգրկված են առարկայական մասնագետներ, ԿԳՄՍ նախարարության և ատեստավորումը կազմակերպած կառույցի աշխատակիցներ: Հանձնաժողովը արդյունքների հրապարակումից հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է բողոք- հայտերը:

Բողոքարկման արդյունքում ընդունվում է որոշում գրավոր աշխատանքի միավորի պահպանման, բարձրացման կամ իջեցման մասին: Հանձնաժողովի ընդունած որոշման հիման վրա գրավոր աշխատանքի բողոքարկման արդյունքները հրապարակվում են ԳԹԿ-ի կայքէջում գրավոր աշխատանքի բողոքարկման ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում: Բողոքարկման արդյունքները վերջնական են և այլևս բողոքարկման ենթակա չեն:

Գրականության ցանկ

1. Ղազարյան Ֆ.Գ. [Սպորտային պատրաստության հիմունքները](#).- Երևան, 1993, 212 էջ:
2. Ղազարյան Ֆ.Գ. [Սպորտային պատրաստության տեսություն և մեթոդիկա](#).- Երևան, 2011, 104 էջ:
3. Ղազարյան Ֆ.Գ., Ղազարյան Գ. Ֆ. [Պատանի մարզիկների երկարաժամկետ պատրաստության առանձնահատկությունները](#), Երևան.- 2013, 92 էջ:
4. Առաքելյան Վ.Բ., Գալստյան Հ.Գ., Հարությունյան Խ.Թ. [Ազատ ըմբշամարտ](#).- Երևան, 2008, 315 էջ:
5. Առաքելյան Վ., Սադյան Բ., Կիրակոսյան Կ., Գալտազազյան Է. Հունահռոմեական ըմբշամարտ.- Երևան, 2012, 300 էջ:
6. Առաքելյան Վ., Սադյան Բ. [Սամբո ըմբշամարտ](#).- Երևան, 2007, 309 էջ:
7. Խիթարյան Դ.Ս. [Ձյուդո](#).- Երևան, 2017 184 էջ:
8. Առաքելյան Վ., Սադյան Բ. Ձյուդո ըմբշամարտ.- Երևան, 2009, 309 էջ:
9. Հարությունյան Խ.Թ. [Ֆիզիկական պատրաստության միջոցները ըմբշամարտում](#).- Երևան, 2009, 76 էջ:
10. Բաբայան Հ.Ա., Մարգարյան Բ.Կ., Չաթալբաշյան Ս.Պ, [Սպորտի հոգեբանություն](#), թարգմանիչներ՝ Հայաստանի հրատարակչություն: Երևան 1976թ., 176 էջ:
11. Բաբայան Հ. Ա., [Հոգեբանական պատրաստության հիմնախնդիրները բարձր նվաճումների սպորտում](#). ՈՒս. ձեռնարկ, - Եր:, 2007, - 121 էջ:
12. Բաբայան Հ., [Սպորտի հոգեբանություն, «Դասախոսություններ»](#) ՀՖԿՍՊԻ, 38 էջ, 2023
13. Չատինյան Ա., [Սպորտի մանկավարժություն «Դասախոսություններ»](#) ՀՖԿՍՊԻ, էջ 41, 2023
14. Աղաջանյան Մ.Գ, [Սպորտային բժշկություն](#) (գլուխ 5, 8, 14, 15, 18), հեղինակային հրատարակչություն, էջ 462, Երևան 2015թ:
15. Հարությունյան Ա., [Սպորտի ֆիզիոլոգիա «Դասախոսություններ»](#) ՀՖԿՍՊԻ, 18 էջ, 2023